Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
ապրիլի 10-ի N 353 - Ա
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ. ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄՆԱԲԱԺՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Թիրախը	Ծրագրային գործողությունները	Պատասխանատու գերատեսչությունը	Փաստաթղթային ապացույցը	Կատարման վերջնաժամկետը
1.	Հանրային ֆինանսների կառավարման և հանրային ծառայությունների կարգավորման բարելավում	1) Բոլոր պետական մարմինների համար ծրագրային բյուջետավորման իրականացման ուղեցույցները պետք է հրապարակված լինեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարի հրաման	20.09.2017 թ.
		1.1) 2019 թ. բյուջեի համար ծրագրային բյուջետավորումը պետք է իրականացված լինի ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պաշտոնական կայքերում հրապարակում և համապատասխան հրամանների ընդունում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի համապատասխան հրամանների ընդունում	30.09.2017 թ. 30.09.2017 թ.

		2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից պետք է իրականացված լինի իր թափանցիկության ու հաշվետվողականության բարելավմանն ու անկախության մակարդակի բարձրացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության հաստատած ծրագիրը:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	ՀՀ կառավարության կողմից համապատասխան օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի ներկայացում Ազգային ժողով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	ՀՀ կառավարության հաստատված ծրագրով նախատեսված օրենքների նախագծերը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց և ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետ
		3) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից պետք է ընդունված լինեն «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» որոշումը և պայմանագրերի օրինակելի ձևերը:	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	Կատարված է:
		4) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի բյուջեն 2018 թ.-ի համար պետք է ավելացված լինի՝ ՀՀ կառավարության հաստատած ծրագրի պահանջների բավարարումն ապահովելու համար:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ՀՀ 2018 թ. պետական բյուջեի նախագիծ	ՀՀ կառավարության հաստատված ծրագրով նախատեսված օրենքների նախագծերը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց և ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետ

2.	Ավելացած ֆինանսավորում և բարելավված գործառնություններ ճանապարհային ոլորտում	5) 2018 և 2019 թթ.-ի համար ճանապարհների պահպանման բյուջեն 2016 թ. համեմատ ավելացվել է, համապատասխանաբար, 47%-ով և 82 %-ով՝ չհաշված դոնորների ֆինանսավորումը:	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ 2018 թ. պետական բյուջեի նախագիծ	31.10.2017 թ.
		6) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը պետք է կնքած լինի ճանապարհների վերականգնման առնվազն մեկ պայմանագիր, որում արտացոլվում են նոր նվազագույն պահանջները:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի հրաման	30.06.2017 թ.
		7) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը պետք է կնքած լինի (i) կատարողականի վրա հիմնված առնվազն մեկ պայմանագիր (ii) արժեքի ինդեքսավորմամբ առնվազն մեկ պայմանագիր, (iii) առնվազն մեկ պայմանագիր՝ ստանդարտ 5 տարիներից տարբերվող ժամանակահատվածի համար, (iv) պարբերական պահպանման առնվազն մեկ պայմանագիր:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից համապատասխան պայմանագրերի կնքում	30.06.2017 թ.
		8) «ՀայԱվտոՃան»-ը պետք է տեղադրած լինի երթևեկության ինտենսիվության հաշվարկի առնվազն 10 նոր կայան և կատարի առնվազն 1200 կիլոմետր ծածկող՝ ճանապարհային ծածկույթի ուսումնասիրություն:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	Համապատասխան հաշվետվության ներկայացում Ասիական զարգացման բանկին	30.09.2017 թ.

		9) ՀՀ կառավարությունը պետք է իրականացրած լինի «ՀայԱվտոՃան»-ի գործառույթների ուսումնասիրություն «ՀայԱվտոՃան»-ի կազմակերպական կառուցվածքի ուժեղացման և որոշումների կայացման թափանցիկության, կարողությունների և շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ՀՀ կառավարության որոշում	31.07.2017 թ.
3.	Ֆինանսավորման ավելացում և գործառնությունների բարելավում ջրային ոլորտում	10) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն պետք է պայմանագիր կնքած լինի անկախ ընկերության հետ՝ վարձակալության պայմանագրի շրջանակներում հիմնական կատարողական ցուցանիշների հետ մասնավոր վարձակալի համապատասխանությունն աուդիտի ենթարկելու նպատակով, և վարձակալը պետք է նշանակած լինի ֆինանսական աուդիտորի:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ ապահովել համապատասխան պայմանագրի կնքումը և ֆինանսական աուդիտորի նշանակումը	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նամակ	31.05.2017 թ.
		11) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ներդրումների պլանավորման և գույքի կառավարման վարչությունում պետք է նշանակված լինեն առնվազն 12 արհեստավարժ աշխատողներ, և վարչությունը պետք է ունենա իր լիազորություններն իրականացնելու ուղեցույցներ:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի որոշում	31.05.2017 թ.
		12) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն պետք է մշտադիտարկած լինի ջրային ոլորտի ռազմավարության իրականացումը և արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ներկայացրած լինի կառավարությանը:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ կառավարության արձանագրային որոշում	30.06.2017 թ.

		13) ՀՀ կառավարությունը պետք է պատրաստած լինի ջրահեռացման օրենսդրական փոփոխությունների նախագիծը՝ ջրահեռացման կառավարումը բարելավելու համար:	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ կառավարության արձանագրային որոշում	31.07.2017 թ.
4.	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում մրցակցության մակարդակի բարձրացում և եկամուտների ձևավորում	14) ՀՀ կառավարության համաձայնություն էլեկտրաէներգիայի շուկայի նոր կառուցվածքի վերաբերյալ և գործողությունների ժամկետային ծրագրի հաստատում՝ էլեկտրաէներգիայի նոր մրցակցային շուկա ներդնելու համար:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	ՀՀ կառավարության արձանագրային որոշում	30.06.2017 թ.
		15) ՀՀ կառավարությունը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը պետք է ներկայացրած լինի ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	ՀՀ կառավարության արձանագրային որոշում	30.06.2017 թ.
		16) ՀՀ կառավարությունը պետք է ներկայացրած լինի ցանցային կանոնակարգ՝ անդրսահմանային և միջպետական առևտրի հնարավորություն ստեղծելու նպատակով:	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	30.06.2017 թ.
		17) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է ներդրած լինի շուկայի կանոններ էլեկտրաէներգիայի մրցակցային առևտրի համար և ապահովի բաշխման սակագնի կիրառումը:	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	Կատարված է:

		18) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն՝ յուրաքանչյուրն իր մասով, իրականացնում են ջրամատակարարման և էլեկտրաէներգետիկայի ոլորտներում մասնավոր գործընկերների հետ կնքված պայմանագրերի հետ կապված պայմանական պարտավորությունների վերաբերյալ ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից համապատասխան ուսումնասիրությունների արդյունքների ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն	15.05.2017 թ.
		19) ՀՀ ֆինանսների նախարարությունը պետք է իրականացրած լինի պայմանական պարտավորությունների վերաբերյալ ուսումնասիրությունը՝ էլեկտրաէներգետիկայի և ջրամատակարարման ոլորտներում մասնավոր կոնտրագենտների հետ կնքված պայմանագրերի հետ կապված:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ՄԺԾԾ	10.07.2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ